



«ԹԵԼ-ՍԵԼ» ՓԲԸ

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

ՀՀ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 29.05.2007 թ-ին

Գրանցման համար 286.120.06491, վկայական համար 03 Ա 076163

Գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փ. 13



Բովանդակություն

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ.....	3
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն.....	4
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն.....	8
ՀԱՍԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ	
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	10
1. Ընդհանուր տեղեկություններ և իրավական կարգավիճակը.....	10
2. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմքերը.....	11
3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը.....	14
4. Հիմնական միջոցներ.....	21
5. Ոչ նյութական ակտիվներ.....	21
6. Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում.....	22
7. Հետաձգված հարկային ակտիվներ.....	23
8. Այլ ֆինանսական ակտիվներ.....	23
9. Ապրանքանյութական պաշարներ.....	23
10. Դեբիտորական պարտքեր և տրված կանխավճարներ.....	24
11. Դրամական միջոցներ.....	24
12. Այլ ընթացիկ ակտիվներ.....	24
13. Սեփական կապիտալի տարրեր.....	24
14. Վարկեր և փոխառություններ.....	25
15. Կրեդիտորական պարտքեր և ստացված կանխավճարներ.....	26
16. Պահուստներ.....	26
17. Հասույթ և մատուցված ծառայությունների ինքնարժեք.....	26
18. Այլ եկամուտներ.....	27
19. Իրացման ծախսեր.....	27
20. Վարչական ծախսեր.....	28
21. Այլ ծախսեր.....	28
22. Ֆինանսական ծախսեր.....	29
23. Հատկացումներ սոցիալական ապահովության հիմնադրամին.....	29
24. Հարկեր և այլ պարտադիր վճարներ.....	29
25. Կապակցված կողմերի բացահայտում.....	30
26. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ.....	31
27. Պայմանական պարտավորություններ.....	32

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Թել-Սել» Փակ Բաժնետիրական Ընկերության Բաժնետերերին

Մեր կողմից իրականացվել է «Թել-Սել» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշիռը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով մեզանից պահանջվում է բավարարել բարոյական վարքի կանոնները և պլանավորել ու անցկացնել աուդիտը՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր՝ ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիքի ձևափոխման հիմքեր

Մենք հնարավորություն չենք ունեցել իրականացնելու Կազմակերպության դուստր ընկերության՝ «Թեյ-Սել Սերվիս» ՍՊԸ-ի 2012 թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտ կամ աուդիտորական այլ ընթացակարգեր: Կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված ակտիվների 201,778 հազար դրամ մասը, պարտավորությունների 189,275 հազար դրամ մասը, ֆինանսական արդյունքում հասույթի 104,676 հազար դրամ մասը և սեփական կապիտալում ներառված 12,453 հազար դրամ չբաշխված շահույթը վերաբերում է նշված դուստր ընկերությանը: Հետևաբար, մենք անկարող ենք գնահատել նշված գումարների հավաստիությունը:

Ձևափոխված կարծիք

Մեր կարծիքով, բացառությամբ կարծիքի ձևափոխման հիմքեր պարագրաֆում նկարագրված հարցի ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության ֆինանսական վիճակը և նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	4	165,824	11,460
Ոչ նյութական ակտիվներ	5	27,646	24,199
Ներդրումներ ասոցացված կազմակերպություններում	6	1,196,079	1,135,500
Հետաձգված հարկային ակտիվներ	7	2,930	7,023
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	8	11,950	5,450
<i>Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ</i>		<i>1,404,429</i>	<i>1,183,632</i>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Ապրանքանյութական պաշարներ	9	8,157	83
Դեբիտորական պարտքեր	10	166,273	51,225
Տրված կանխավճարներ	10	2,504	1,782
Այլ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	8	2,390	270
Դրամական միջոցներ	11	683,468	294,776
Այլ ընթացիկ ակտիվներ	12	88	-
<i>Ընդամենը ընթացիկ ակտիվներ</i>		<i>862,880</i>	<i>348,136</i>
Ընդամենը ակտիվներ		2,267,309	1,531,768
Կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	13	30,000	30,000
Չբաշխված շահույթ	13	404,131	7,402
Պահուստային հիմնադրամ		4,500	-
Ընդամենը կապիտալ		438,631	37,402
Պարտավորություններ			
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ	14	135,034	576,112
<i>Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ</i>		<i>135,034</i>	<i>576,112</i>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ	14	643,339	424,347
Կրեդիտորական պարտքեր	15	934,438	464,549
Ստացված կանխավճարներ	15	85,013	16,266
Պահուստներ	16	30,854	13,092
<i>Ընդամենը ընթացիկ պարտավորություններ</i>		<i>1,693,644</i>	<i>918,254</i>
Ընդամենը պարտավորություններ		1,828,678	1,494,366
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ		2,267,309	1,531,768

Կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Տնօրեն՝
Ա. Ազատյան

Գլխավոր հաշվապահ՝
Ե. Մարյանյան

**Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված
հաշվետվություն**

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	<u>2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի</u>	<u>2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի</u>
Հասույթ	17	1,248,985	337,206
Մատուցված ծառայությունների ինքնարժեք	17	(503,504)	(196,858)
Համախառն շահույթ		745,481	140,348
Այլ եկամուտներ	18	161,195	34,879
Իրացման ծախսեր	19	(4,595)	(3,186)
Վարչական ծախսեր	20	(100,721)	(47,307)
Այլ ծախսեր	21	(191,212)	(24,341)
Գործառնական շահույթ		610,148	100,393
Ֆինանսական եկամուտներ		-	-
Ֆինանսական ծախսեր	22	(108,576)	(2,341)
Ասոցիացված կազմակերպության շահույթի բաժնեմաս	6	(544)	-
Շահույթ նախքան հարկումը		501,028	98,052
Շահութահարկ	25	(116,741)	(19,269)
Համապարփակ ֆինանսական արդյունք		384,287	78,783

Կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Տնօրեն՝
Ա. Ազատյան

Գլխավոր հաշվապահ՝
Ե. Մարյանյան

Կ. Տ.

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

Վերագրելի մայր կազմակերպության սեփականատերերին

(ՀՀ հազ. դրամներով)	Կանոնադրական կապիտալ	Պահուստային հիմնադրամ	Չբաշխված շահույթ / (Չծածկված վնաս)	Ընդամենը
2011թ. հունվարի 1-ի դրությամբ	30,000	-	(71,381)	(41,381)
Վերահաշվարկված մնացորդ	30,000	-	(71,381)	(41,381)
Համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	78,783	78,783
Հայտարարված շահաբաժիններ	-	-	-	-
2011թ. դեկտեմբեր 31-ի դրությամբ	30,000	-	7,402	37,402
2012թ. հունվարի 1-ի դրությամբ	30,000	-	7,402	37,402
Նախորդ ժամանակաշրջանի էական սխալների ճշգրտում	-	370	9,510	9,880
Վերահաշվարկված մնացորդ	30,000	370	16,912	47,282
Համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	384,287	384,287
Շահույթից հասկացում	-	4,130	(4,130)	-
Չեռքբերված դուստր կազմակերպության չբաշխված շահույթ	-	-	7,062	7,062
Հայտարարված շահաբաժիններ	-	-	-	-
2012թ. դեկտեմբեր 31-ի դրությամբ	30,000	4,500	404,131	438,631

Կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Տնօրեն՝
Ա. Ազատյան

Գլխավոր հաշվապահ՝
Ե. Մարյանյան

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	<u>2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի</u>	<u>2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի</u>
Սկզբնական մնացորդ	11	294,776	149,918
Գործառնական գործունեություն			
<i>Մուտքեր գործառնական գործունեությունից</i>			
Մուտքեր ծառայությունների մատուցումից		2,532,704	316,285
Մուտքեր վճարահաշվարկային գործունեությունից		39,358,196	12,707,844
Այլ մուտքեր		19,596	12,070
<i>Ընդամենը մուտքեր գործառնական գործունեությունից</i>		<u>41,910,496</u>	<u>13,036,199</u>
<i>Ելքեր գործառնական գործունեությունից</i>			
Ձեռքբերված ապրանքների ու նյութերի, ստացված աշխատանքների ու ծառայությունների դիմաց		702,176	1,143,004
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ		122,480	51,842
Սոցիալական ապահովագրության վճարներ	23	20,046	8,165
Հարկեր և այլ պարտադիր վճարներ		55,810	12,396
Ելքեր վճարահաշվարկային գործունեությունից		39,206,064	12,634,449
Այլ վճարներ		776,913	17,547
<i>Ընդամենը ելքեր գործառնական գործունեությունից</i>		<u>40,883,489</u>	<u>13,867,403</u>
Չուտ հոսքեր գործառնական գործունեությունից		1,027,007	(831,204)
Ներդրումային գործունեություն			
<i>Մուտքեր ներդրումային գործունեությունից</i>			
Փոխառությունների հետվերադարձ		145,400	12,520
Ստացված շահաբաժիններ		8,982	-
Այլ մուտքեր ներդրումային գործունեությունից		2,719	-
<i>Ընդամենը մուտքեր ներդրումային գործունեությունից</i>		<u>157,101</u>	<u>12,520</u>
<i>Ելքեր ներդրումային գործունեությունից</i>			
Հիմնական միջոցների ձեռքբերում		115,147	960
Փոխառությունների տրամադրում		153,300	11,340
Դուստր ընկերության ձեռքբերում		79,800	-
<i>Ընդամենը ելքեր ներդրումային գործունեությունից</i>		<u>348,247</u>	<u>12,300</u>
Չուտ հոսքեր ներդրումային գործունեությունից		(191,146)	220

Գրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

(Շարունակություն)

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	<u>2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի</u>	<u>2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի</u>
Ֆինանսական գործունեություն			
<i>Մուտքեր ֆինանսական գործունեությունից</i>			
Վարկերի և փոխառությունների ստացում		89,500	983,200
Մուտքեր ֆինանսական այլ գործունեությունից		-	-
<i>Ընդամենը մուտքեր ֆինանսական գործունեությունից</i>		<u>89,500</u>	<u>983,200</u>
<i>Ելքեր ֆինանսական գործունեությունից</i>			
Վարկերի և փոխառությունների մարում		501,214	5,002
Տոկոսների վճարում	22	93,353	2,341
<i>Ընդամենը ելքեր ֆինանսական գործունեությունից</i>		<u>594,567</u>	<u>7,343</u>
Չուտ հոսքեր ֆինանսական գործունեությունից		(505,067)	975,857
Գրամական միջոցների փոփոխություն		330,794	144,873
Արտարժույթային միջոցների փոխարժեքային տարբերության արդյունք		57,898	(15)
Գրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	11	683,468	294,776

Կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Տնօրեն՝
Ա. Ազատյան

Գլխավոր հաշվապահ՝
Ե. Մարյանյան

Կ. Տ.

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ընդհանուր տեղեկություններ և իրավական կարգավիճակը

«Թել-Սել» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Մայր Կազմակերպություն) գրանցվել է 29.05.2007 թ-ին, նրա գործունեության ժամկետը սահմանափակված չէ:

Մայր Կազմակերպության իրավաբանական հասցեն.

ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փ. 13:

Մայր Կազմակերպության կանոնադիր կապիտալը և բաժնետերերը.

Կանոնադիր կապիտալը կազմում է 30,000 հազ. դրամ: Թողարկվել են 150 հազ. դրամ անվանական արժեքով 200 հատ հասարակ բաժնետոմսեր, որոնք տեղաբաշխված են բաժնետերերի միջև հետևյալ կերպ.

- Տաթևիկ Ավետիսյան - 22.5 % բաժնեմասի տեր,
- Արամ Սարգսյան - 42.5 % բաժնեմասի տեր,
- Եվգենի Տրեյստեր - 70.0 % բաժնեմասի տեր:

Մայր Կազմակերպության տնօրենը.

Արամ Ազատյան՝ տնօրեն է գրանցվել 20.10.2008 թ-ին:

Մայր Կազմակերպության գործունեության առարկան.

Վճարահաշվարկային և դրամական փոխանցումների իրականացման ծառայությունների մատուցում:

Դուստր ընկերություն.

«Թել-Սել Սերվիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն՝ (այսուհետ՝ Դուստր) գրանցված 29.08.2007 թ-ին: 2012 թ-ին կատարվել է մասնակիցների փոփոխություն՝ բաժնեմասերի 100% փայտեր է դարձել «Թել-Սել» ՓԲԸ-ն:

Դուստր ընկերության գործունեության առարկան.

Դրամական փոխանցումների ապարատների վարձատվություն, սպասարկում և գովազդային ծառայությունների մատուցում:

2. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (այսուհետ՝ ՀՀՄՄԽ) և Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ) համաձայն:

2.2 Ներկայացված ժամանակահատված

«Թել-Սել» ՓԲԸ-ն հանդիսանում է «Թել-Սել Սերվիս» ՍՊԸ-ի Մայր Կազմակերպությունը (միասին այսուհետ՝ Խումբ):

Մայր Կազմակերպությունը, 2012 թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբելով իր և Դուստր ընկերության ֆինանսական հաշվետվությունները, կազմել է սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները: Մայր Կազմակերպությունը չի պատրաստել 2011 թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններ, քանի որ այդ ամսաթվի դրությամբ «Թել-Սել Սերվիս» ՍՊԸ-ն չի եղել նրա Դուստրը:

Ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է Մայր Կազմակերպության՝ 2012 թ-ի դեկտեմբերի 31-ի և 2011 թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ (համեմատական ամենավաղ տեղեկատվություն) ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս:

Մայր Կազմակերպությունն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը ՖՀՄՍ-ի համաձայն պատրաստելիս կիրառել է հետևյալ մոտեցումները.

- ✓ չի ճանաչել հոդվածները որպես ակտիվ կամ պարտավորություն, եթե ՖՀՄՍ-ով թույլ չի տրվում այդպիսի ճանաչում,
- ✓ ճանաչել է այն ակտիվներն ու պարտավորությունները, որոնց ճանաչումը պահանջվում է ՖՀՄՍ-ով,
- ✓ ՖՀՄՍ-ն կիրառել է բոլոր ճանաչված ակտիվները և պարտավորությունները չափելիս:

2.3 Համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացում

Մայր Կազմակերպությունը ներկայացնում է Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունները համաձայն ՖՀՄՄ-ի:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս միավորվել են Մայր Կազմակերպության և Դուստրի ֆինանսական հաշվետվությունները տող առ տող՝ ակտիվների, պարտավորությունների, սեփական կապիտալի, եկամտի և ծախսի միանման հոդվածներն իրար գումարելով: Որպեսզի համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացնեն ֆինանսական տեղեկատվություն Խմբի՝ որպես մեկ տնտեսական միավորի մասին, իրականացվել են հետևյալ քայլերը.

- Մայր Կազմակերպության և Դուստր ընկերության ֆինանսական հաշվետվությունների միանման հոդվածները գումարվել են՝ փոխբացառելով Դուստրի մոտ Մայր Կազմակերպության ներդրման հաշվեկշռային արժեքը և Դուստրի սեփական կապիտալում Մայր Կազմակերպության բաժնեմասը.
- Ներխմբային մնացորդները, գործարքները, եկամուտներն ու ծախսերը ամբողջությամբ բացառվել են՝ փոխմարվել են.
- որոշվել են հաշվետու ժամանակահատվածում համախմբված Դուստր կազմակերպության շահույթում կամ վնասում չվերահսկող բաժնեմասերը.
- համախմբված Դուստր կազմակերպության զուտ ակտիվներում չվերահսկող բաժնեմասերը ներկայացել են Մայր Կազմակերպության բաժնեմասից առանձին:

2.4 Դեկլարության գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՄ-ի և ՀՀ հաշվապահական հաշվառման օրենսդրությամբ պահանջվում է, որ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում Մայր Կազմակերպության ղեկավարությունը կատարի անհրաժեշտ գնահատումներ, կանխատեսումներ և ենթադրություններ՝ կիրառելով արժանահավատության (հաշվենկատության), էականության և համադրելիության սկզբունքները: Այդ դատողությունները կիրառվում են ֆինանսական հաշվետվությունների ցուցանիշների՝ ակտիվների ու պարտավորությունների, եկամուտների ու ծախսերի չափման ժամանակ:

2.5 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ այն դեպքերի որոնց մասին նշված է հաշվապահական հաշվառման քաղաքականությունում:

2.6 Գործառնական և հաշվետվությունների ներկայացման արժույթ

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության գործառնական արժույթը: Ղեկավարության համոզմամբ՝ այն լավագույնս է արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունները և ամենահարմարն է Խմբի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար:

ՀՀ դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.7 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում

Մայր Կազմակերպությունը որոշել է պատրաստել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին մեկ հաշվետվություն՝ ենթագումարներով երկու առանձին հաշվետվությունների (ֆինանսական արդյունքների մասին առանձին հաշվետվություն, որին հետևում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն) փոխարեն:

2.8 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Մայր Կազմակերպությունն ընդունել է ՀՀՄՍԽ-ի և ՄԿ-ի կողմից հրապարակված ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտումներ» նոր ստանդարտը, որը կիրառելի է նրա գործունեության համար:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

3.1 Ներդրումներ ասոցացված կազմակերպություններում

Ասոցիացված կազմակերպություններում ներդրումներից (եթե կան այդպիսիք) շահաբաժինների եկամուտը ճանաչվում է, երբ հաստատվում է խմբի իրավունքը՝ ստանալու վճարումները: Նման դեպքերում ճանաչված եկամուտը պետք է ներառվի այլ եկամուտներում:

3.2 Հասույթի ճանաչումը

Ծառայությունների մատուցումից հասույթը ճանաչվում է, երբ ծառայությունների մատուցումը ավարտված է, և արդյունքների սեփականության իրավունքը փոխանցված է, իսկ վարձատվության դեպքում ճանաչվում է օրացուցային ամսվա ավարտին: Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք իրական արժեքով՝ գտված զեղչերից և իրացման հետ կապված հարկերից, որոնք գանձվում են Հայաստանի Հանրապետության կառավարության անունից:

Ծառայությունների մատուցումից ստացված հասույթը ճանաչվում է, երբ բավարարվում են հետևյալ պայմանները.

- կազմակերպությունը գնորդին (պատվիրատուին) է փոխանցել մատուցված ծառայությունների սեփականության հետ կապված ռիսկերի և փոխհատուցումների մեծ մասը,
- կազմակերպությունը չի պահպանում կառավարման այն չափի մասնակցություն, որը բխում է սեփականության իրավունքից, և մատուցված ծառայությունների նկատմամբ վերահսկողություն,
- հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը,
- հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն կազմակերպություն,
- հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի հետ կապված՝ կատարված կամ կատարվելիք ծախսերը:

3.3 Փոխառության ծախսեր

Փոխառության բոլոր ծախսերը ճանաչվում են այն ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, որի ընթացքում տեղի են ունեցել այդ ծախսերը:

3.4 Շահութահարկ

Շահութահարկի ծախսն իրենից ներկայացնում է վճարվելիք ընթացիկ հարկի և հետաձգված հարկի ընդհանուր գումարը:

Վճարվելիք ընթացիկ հարկը հիմնված է տարվա հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվությունների ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքի և նրանց համապատասխան հարկային բազաների տարբերությամբ (որը հայտնի է որպես ժամանակավոր տարբերություններ): Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր ժամանակավոր տարբերությունների համար, որոնք ակնկալվում է, որ ապագայում կբարձրացնեն հարկվող շահույթը:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են բոլոր ժամանակավոր տարբերությունների համար, որոնք ակնկալվում է, որ ապագայում կնվազեցնեն հարկվող շահույթը, ինչպես նաև ցանկացած չօգտագործված հարկային վնասները կամ չօգտագործված հարկային գեղչերը: Հետաձգված հարկային ակտիվները չափվում են այն ամենաբարձր գումարով, որը, հիմք ընդունելով ընթացիկ կամ գնահատված ապագա հարկվող շահույթը, առավել հավանական է, քան՝ ոչ, որ կփոխհատուցվի:

Հարկային ակտիվի գուտ հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճշգրտվում է այնպես, որ արտացոլի ապագա հարկվող շահույթների ընթացիկ գնահատումը: Ցանկացած ճշգրտում ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հետաձգված հարկային ակտիվը հաշվարկվում է այն հարկման դրույքով, որն ակնկալվում է, որ կկիրառվի ժամանակաշրջանի հարկվող շահույթի (հարկային կորստի) նկատմամբ այն ժամանակաշրջանի համար, որում ակնկալվում է, որ հարկային ակտիվը կիրացվի կամ հարկային պարտավորությունը կմարվի՝ հիմնվելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ուժի մեջ եղած կամ ըստ էության ուժի մեջ եղած հարկային դրույքների վրա:

3.5 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունն ու արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման կամ կառուցման գինը, ներկրման տուրքերը, հարկերը և պարտադիր այլ վճարները, որոնք ենթակա չեն վերադարձման, և այդ հիմնական միջոցին ուղղակիորեն վերագրվող այլ ծախսումները:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի ու ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում՝ ամսական կտրվածքով: Մաշվածության հաշվարկը սկսվում է ակտիվի օգտագործման հանձնման հաջորդ ամսվանից:

Ըստ դասերի՝ հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները հետևյալն են.

Սարքավորումներ	-	5-8 տարի
Գրասենյակային գույք	-	1-5 տարի
Տրանսպորտային միջոցներ	-	5 տարի

Անավարտ և չշահագործվող հիմնական միջոցների նկատմամբ մաշվածք չի հաշվարկվում:

Եթե կա որևէ հայտանիշ, որ տեղի է ունեցել ակտիվի մաշվածության դրույքաչափի, օգտակար ծառայության կամ մնացորդային արժեքի էական փոփոխություն, ապա տվյալ ակտիվի մաշվածությունը վերանայվում է այնպես, որ ապագայում ճիշտ արտահայտի նոր ակնկալիքները:

Հիմնական միջոցի վրա կատարված ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են այդ հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները՝ ներառյալ վերանորոգման ու պահպանման, ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններում դրանց կատարման ժամանակաշրջանում: Վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ վերանորոգման ծախսերը կապիտալացվում են և հիմնական միջոցների կազմում ներկայացվում են առանձին դասով: Դրանց նկատմամբ հաշվարկվում է մաշվածություն, օգտակար ծառայության ժամկետ է հանդիսանում վարձակալության ժամկետը:

3.6 Ներդրումային գույք

Ակտիվը՝ հող կամ շենք, որը պահվում է սեփականատիրոջ մոտ կամ ֆինանսական վարձակալության դեպքում վարձակալի մոտ, ճանաչվում է որպես ներդրումային գույք՝ վարձակալությունից եկամուտ վաստակելու կամ դրա արժեքի աճի, կամ էլ միաժամանակ այդ երկու նպատակներով:

Ներդրումային գույքը առաջացնում է դրամական միջոցների հոսքեր, որոնք մեծապես անկախ են կազմակերպության կողմից պահվող այլ ակտիվներից:

Ներդրումային գույքը (բացառությամբ այն գույքի, որը համապատասխանում է վաճառքի համար պահվող դասակարգվելու չափանիշին) չափվում է ինքնարժեքով (սկզբնական արժեքով)՝ ներառելով գործառնության հետ կապված ծախսումները: Գնված ներդրումային գույքի ինքնարժեքը ներառում է դրա գնման գինը և ուղղակիորեն վերագրելի ցանկացած ծախսում:

Ներդրումային գույքի (բացառությամբ այն գույքի, որը համապատասխանում է վաճառքի համար պահվող դասակարգվելու չափանիշին) մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը:

3.7 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները սահմանվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Դրանք ամորտիզացվում են իրենց օգտակար ծառայության ընթացքում՝ կիրառելով ուղղագծային մեթոդը: Եթե կա

որևէ հայտանիշ, որ տեղի է ունեցել ոչ նյութական ակտիվի ամորտիզացիայի դրույքաչափի, օգտակար ծառայության կամ մնացորդային արժեքի էական փոփոխություն, ապա ամորտիզացիան պետք է վերանայվի այնպես, որ արտացոլի նոր ակնկալիքները:

3.8 Ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Խմբի հիմնական միջոցները, ոչ նյութական ակտիվները վերանայվում են՝ պարզելու, թե կա արդյոք որևէ հայտանիշ, որ տվյալ ակտիվները կրել են արժեզրկումից կորուստներ: Եթե առկա է հնարավոր արժեզրկման որևէ հայտանիշ, ապա արժեզրկվող ակտիվի (կամ կից ակտիվների խումբ) փոխհատուցվող գումարը գնահատվում է և համեմատվում հաշվեկշռային արժեքի հետ: Եթե գնահատված փոխհատուցվող գումարն ավելի ցածր է, ապա հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև գնահատված փոխհատուցվող գումար, իսկ արժեզրկումից կորուստն անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Նույն կերպ յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ պաշարները գնահատվում են՝ պաշարների յուրաքանչյուր հոդվածի (կամ համանման հոդվածների խմբի) հաշվեկշռային արժեքը դրա վաճառքի գին՝ հանած համալրման և վաճառքի ծախսումները, հետ համեմատելով: Եթե պաշարների որևէ հոդված (կամ համանման հոդվածների խումբ) արժեզրկվել է, ապա հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև վաճառքի գին՝ հանած համալրման ու վաճառքի ծախսումները, իսկ արժեզրկումից կորուստն անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Եթե արժեզրկումից կորուստը համապատասխանաբար հակադարձվում է, ապա ակտիվի (կամ կից ակտիվների խմբի) հաշվեկշռային արժեքը ավելացվում է մինչև դրա փոխհատուցվող գումարի վերանայված գնահատված արժեքը (պաշարների դեպքում՝ վաճառքի գին՝ հանած համալրման և վաճառքի ծախսումները), բայց այնպես, որ ավելացված արժեքը չգերազանցի այն գումարը, որը սահմանված կլիներ, եթե ակտիվի (կից ակտիվների խմբի) արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ նախորդ տարիների համար: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

3.9 Վարձակալություններ

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական բոլոր այն դեպքերում, երբ փոխանցվում են վարձակալված ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները: Մնացած բոլոր վարձակալությունները դասակարգված են որպես գործառնական վարձակալություն:

Ֆինանսական վարձակալությամբ պահվող ակտիվների նկատմամբ իրավունքները ճանաչվում են որպես ակտիվներ՝ վարձակալված գույքի իրական արժեքին հավասար գումարով (կամ, եթե ավելի ցածր է, նվազագույն վարձավճարների ներկա արժեքով)՝ վարձակալության սկզբի դրությամբ: Վարձատուի նկատմամբ ունեցած համապատասխան ֆինանսական պարտավորությունը ներառվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ՝ որպես ֆինանսական վարձակալության գծով պարտավորություն: Վարձավճարները հավասարապես բաշխվում են ֆինանսական վճարի և չվճարված պարտավորության նվազեցման միջև այնպես, որ ստացվի հաստատուն տոկոսադրույք ժամանակաշրջանի պարտավորության մնացորդի

նկատմամբ: Ֆինանսական վճարները պահվում են շահույթի կամ վնասի չափումից: Ֆինանսական վճարները ներառված են հիմնական միջոցների մեջ և մաշվում են, ինչպես նաև գնահատվում են նրանց արժեզրկումից կորուստները՝ ճիշտ այնպես, ինչպես սեփական ակտիվները:

Գործառնական վարձալալության շրջանակներում վճարվելիք վարձավճարները հաշվվում են շահույթում կամ վնասում՝ վարձակալության տևողության նկատմամբ գծային հիմունքով:

3.10 Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և վաճառքի գնից՝ հանած համալրման և վաճառքի ծախսումները, նվազագույնով:

Ինքնարժեքը հաշվարկվում է՝ կիրառելով «առաջին մուտք առաջին ելք» (ԱՄԱԵ / FIFO) մեթոդը: Ինքնարժեքը ձևավորվում է պաշարների ձեռքբերման գնին ավելացնելով տեղափոխման, փաթեթավորման և ներկայիս վիճակին հասցնելու համար այլ անհրաժեշտ ծախսերը:

Խումբը, զուտ իրացման արժեքը որոշելիս, հաշվի է առնում որոշ ճշգրտումներ՝ կապված արժեզրկման հետ: Ծշգրտվում է պաշարների արժեքը մինչև վերականգնվող արժեք՝ դանդաղ շրջանառելի և վնասված պաշարների համար:

3.11 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Խումբը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ երբ փոխանցվում են ֆինանսական ակտիվները, բոլոր նշանակալից ռիսկերն ու հատուցումները:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները՝ բացառությամբ այն ֆինանսական ակտիվների ու ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես դասակարգվում են որպես ֆինանսական ակտիվներ ու ֆինանսական պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Ֆինանսական ակտիվների ու ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը ներկայացված է ստորև:

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների, բաժանվում են հետևյալ կատեգորիաների՝

- ✓ փոխառություններ և դեբիտորական պարտքեր,
- ✓ ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,

- ✓ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- ✓ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և որը ցույց է տալիս, թե իրական արժեքի փոփոխության արդյունքում ստացվող օգուտներն ու վնասները պետք է ճանաչվեն համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, թե ուղղակիորեն սեփական կապիտալում: Խմբի ֆինանսական ակտիվներն ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություններում:

Ընդհանուր առմամբ, Խմբի բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում են՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը: Ֆինանսական ակտիվի արժեզրկման գնահատումն իրականացվում է առնվազն յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ համապատասխանաբար «ֆինանսական ծախս» և «ֆինանսական եկամուտ» հոդվածներում:

➤ Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ կազմակերպությունը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և ժամանակին չվճարումը (ավելի քան 365 օր) ցուցանիչ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարն ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

➤ Մնացորդներ դրամարկղում և բանկում

Դրամարկղի և բանկային մնացորդները ներառում են կանխիկ միջոցներ, բանկային հաշիվների մնացորդներ և դրամական միջոցներ ճանապարհին, որոնք ներկայացված են ֆինանսական ակտիվների «վարկեր» և «դեբիտորական պարտքեր» կատեգորիաներում:

Ֆինանսական պարտավորություններ

Խմբի ֆինանսական պարտավորությունները ներառում են վճարահաշվարկային և դրամական փոխանցումների ծառայությունների մատուցման նպատակով հավաքագրված գումարները, վարկերը և փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը՝ ներառյալ ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները,

որոնք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆինանսական պարտավորությունները ներկայացված են ծանոթագրություններում:

➤ Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այդ արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

➤ Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային կրեդիտորական պարտքերը պարտավորություններ են, որոնք հաշվվում են վճարման սովորական պայմաններով և չեն կրում տոկոսներ: Արտարժույթով առևտրային կրեդիտորական պարտքերը վերաձևակերպվում են տեղական արժույթով՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքը: Արտարժույթի փոխարկումից օգուտները կամ վնասները ներառվում են այլ եկամուտներում կամ այլ ծախսերում:

3.12 Սեփական կապիտալ

Թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.13 Արտարժույթ

Արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվել են ՀՀ դրամով՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի (հետագայում՝ ԿԲ) կողմից սահմանված միջին հաշվարկային փոխարժեքները.

Արտարժույթ	31.12.2012 թ-ի ԿԲ-ի միջին հաշվարկային փոխարժեքը	31.12.2011 թ-ի ԿԲ-ի միջին հաշվարկային փոխարժեքը
1 ԱՄՆ դոլար	403.58 ՀՀ դրամ	385.77 ՀՀ դրամ
1 Եվրո	532.24 ՀՀ դրամ	498.72 ՀՀ դրամ
1 ՌԴ ռուբլի	13.27 ՀՀ դրամ	11.98 ՀՀ դրամ

4. Հիմնական միջոցներ

ՀՀ հազ. դրամներով	Սարքավորումներ	Գրասենյակային գույք	Տրանսպորտային միջոցներ	Ընդամենը
Արժեք				
31 դեկտեմբերի 2011	7,373	4,819	4,000	16,192
Ավելացումներ	276,469	17,252	11,413	305,134
Պակասեցումներ	11,821	478	-	12,299
31 դեկտեմբերի 2012	272,021	21,593	15,413	309,027
Կուտակված մաշվածք				
31 դեկտեմբերի 2011	1,968	2,764	-	4,732
Տարվա հատկացումներ	130,060	7,267	4,059	141,386
Պակասեցումներ	2,562	353	-	2,915
31 դեկտեմբերի 2012	129,466	9,678	4,059	143,203
Հաշվեկշռային արժեք				
31 դեկտեմբերի 2011	5,405	2,055	4,000	11,460
31 դեկտեմբերի 2012	142,555	11,915	11,354	165,824

31.12.2012 թ-ի դրությամբ Գուտտրի հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը կազմել է 152,071 հազ. դրամ:

5. Ոչ նյութական ակտիվներ

ՀՀ հազ. դրամներով	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ	Ընդամենը
Արժեք			
31 դեկտեմբերի 2011	26,495	788	27,283
Ավելացումներ	9,053	250	9,303
Պակասեցումներ	-	-	-
31 դեկտեմբերի 2012	35,548	1,038	36,586
Կուտակված մաշվածք			
31 դեկտեմբերի 2011	2,592	492	3,084
Տարվա հատկացումներ	5,454	402	5,856
Պակասեցումներ	-	-	-
31 դեկտեմբերի 2012	8,046	894	8,940
Հաշվեկշռային արժեք			
31 դեկտեմբերի 2011	23,903	296	24,199
31 դեկտեմբերի 2012	27,502	144	27,646

31.12.2012 թ-ի դրությամբ Գուտտրի ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է 5,755 հազ. դրամ:

6. Ներդրումներ ասոցացված կազմակերպություններում

ՀՀ հազ. դրամներով	<u>2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</u>	<u>2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</u>
Ասոցիացված կազմակերպությունում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառված ներդրումներ ¹	38,379	76,050
Ասոցիացված կազմակերպությունում ներդրման գուղվիլ	1,077,950	1,059,450
Դուստր կազմակերպությունում ներդրման գուղվիլ	79,750	-
Ընդամենը ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում	1,196,079	1,135,500

¹ Մայր Կազմակերպությունն ունի 50% բաժնեմաս «Սեգա Պանտերա» ՍՊԸ-ում, որի արժեթղթերը գնանշված չեն բորսայում:

Ստորև ներկայացված է ամփոփ ֆինանսական տեղեկատվություն՝ «Սեգա Պանտերա» ՍՊԸ-ում խմբի ներդրման վերաբերյալ.

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	<u>2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի</u>	<u>2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի</u>
Մասնաբաժին՝ ասոցիացված կազմակերպության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում		
Ոչ ընթացիկ ակտիվներ	3,891	57,653
Ընթացիկ ակտիվներ	34,523	394,976
Ոչ ընթացիկ պարտավորություններ	-	-
Ընթացիկ պարտավորություններ	(35)	(366,699)
Մեփական կապիտալ¹	38,379	85,930
Մասնաբաժին՝ ասոցիացված կազմակերպության հասույթում և եկամտում		
Հասույթ	10,871	367,437
Շահույթ ²	(544)	9,880
Ներդրման հաշվեկշռային արժեք	38,379	85,930

¹ 31.12.2012 թ-ի դրությամբ Մայր Կազմակերպության մասնաբաժինը ասոցիացված կազմակերպության կանոնադրական կապիտալում կազմել է 50%, իսկ 31.12.2011 թ-ի դրությամբ՝ 100%:

² 31.12.2011 թ-ի դրությամբ ավարտված տարվա համար կազմված ֆինանսական հաշվետվություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրման հաշվեկշռային արժեքը չի ներառել ասոցիացված (31.12.2011 թ-ի դրությամբ՝ Դուստր) կազմակերպության շահույթը: Սույն ֆինանսական հաշվետվություններում կատարվել է նախորդ ժամանակահատվածի ճշտում (տես՝ ծանոթագրություն 14):

7. Հետաձգված հարկային ակտիվներ

ՀՀ հազ. դրամներով	<u>2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</u>	<u>2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</u>
Չօգտագործված արձակուրդային գումարների պահուստին համարժեք ստեղծված սոց. վճարների պահուստ	2,930	2,617
Շահութահարկի նվազագույն վճարներ	-	4,406
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ	2,930	7,023

8. Այլ ֆինանսական ակտիվներ

Ընթացիկ և ոչ ընթացիկ այլ ֆինանսական ակտիվներն իրենցից ներկայացնում են աշխատակիցներին տրված անտոկոս փոխառությունները:

ՀՀ հազ. դրամներով	<u>2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</u>	<u>2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</u>
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	11,950	5,450
Այլ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	2,390	270

31.12.2012 թ-ի դրությամբ Գուստրի տված կարճաժամկետ փոխառությունների մնացորդը կազմել է 1,500 հազ. դրամ:

9. Ապրանքանյութական պաշարներ

ՀՀ հազ. դրամներով	Հումք նյութեր	Այլ ապրանքներ	Ընդամենը
31 դեկտեմբերի 2011	5	78	83
31 դեկտեմբերի 2012	7,962	195	8,157

31.12.2012 թ-ի դրությամբ Գուստրի ապրանքանյութական պաշարների մնացորդը կազմել է 7,205 հազ. դրամ:

10. Դեբիտորական պարտքեր և տրված կանխավճարներ

ՀՀ հազ. դրամներով	<u>2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</u>	<u>2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</u>
Դեբիտորական պարտքեր իրացումների գծով	151,488	42,221
Դեբիտորական պարտքեր բյուջեին	6,008	216
Դեբիտորական պարտքեր առհաշիվ անձանց	4,016	8,788
Այլ դեբիտորական պարտքեր	4,761	-
Ընդամենը դեբիտորական պարտքեր	166,273	51,225
Տրված կանխավճարներ	2,504	1,782

31.12.2012 թ-ի դրությամբ Գուստրի դեբիտորական պարտքերի մնացորդը կազմել է 20,331 հազ. դրամ, իսկ տրված կանխավճարների մնացորդը՝ 253 հազ. դրամ:

11. Դրամական միջոցներ

ՀՀ հազ. դրամներով	<u>2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</u>	<u>2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</u>
<u>Կանխիկ</u>		
ՀՀ դրամ	476,938	211,586
<u>Հաշվարկային հաշիվ</u>		
ՀՀ դրամ	206,463	83,142
Արտարժույթ	67	48
Ընդամենը	683,468	294,776

31.12.2012 թ-ի դրությամբ Գուստրի դրամական միջոցների մնացորդը կազմել է 14,575 հազ. դրամ:

12. Այլ ընթացիկ ակտիվներ

Խմբի այլ ընթացիկ ակտիվներն իրենցից ներկայացնում են Գուստր ընկերության հետաձգված ԱԱՀ գումարները, որոնց մնացորդը 31.12.2012 թ-ի դրությամբ կազմել է 88 հազ. դրամ:

13. Սեփական կապիտալի տարրեր

Մայր Կազմակերպության կանոնադրական կապիտալը կազմում է 30,000 հազ. դրամ, որը ձևավորվել է 150 հազ. դրամ անվանական արժեքով 200 հատ հասարակ բաժնետոմսերի տեղաբաշխումից (բաժնետերերի բաժնեմասերի մասին տեղեկատվությունը տես «Ընդհանուր տեղեկություններ և իրավական կարգավիճակը» բաժնում):

Խմբի 2012 թ-ի համապարփակ ֆինանսական արդյունքը կազմել է 384,287 հազ. դրամ: Կատարվել է նախորդ ժամանակաշրջանի էական սխալի ճշգրտում՝ 9,880 հազ. դրամի չափով, որը վերաբերում է ասոցիացված կազմակերպության չբաշխված շահույթի արտացոլմանը (Տես՝ ծանոթագրություն 6) ինչպես նաև Մայր Կազմակերպության պահուստային հիմնադրամին հատկացում 01.01.2012 թ-ի դրությամբ չբաշխված շահույթի 5%-ի չափով՝ 370 հազ. դրամ, համաձայն նրա կանոնադրության:

Մայր Կազմակերպության չբաշխված շահույթին ավելացվել է 2012 թ-ին ձեռքբերման պահին Դուստր ընկերության կուտակված շահույթը՝ 7,062 հազ. դրամ չափով, ինչի արդյունքում 31.12.2012 թ. դրությամբ չբաշխված շահույթը կազմել է 408,631 հազ. դրամ, իսկ զուտ ակտիվները՝ 438,631 հազ. դրամ:

14. Վարկեր և փոխառություններ

<u>Երկարաժամկետ</u>	<u>2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</u>		<u>2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</u>		Տարեկան դրույքը
	ԱՄՆ դոլար	Հազ. դրամ	ԱՄՆ դոլար	Հազ. դրամ	
«Թել-Սել Սերվիս» ՍՊԸ-ից ստացված փոխառություն	-	-	-	19,000	11 %
ՌԴ «Բանկ ՖԻՆԱՄ» ՍՊԸ-ից ստացված վարկ	-	-	1,400,000	540,078	10.5%
Ե. Տրեյստերից ստացված փոխառություն	-	45,885	-	6,685	20%
Ա. Սարգսյանից ստացված փոխառություն	-	42,607	-	6,207	20%
Տ. Ավետիսյանից ստացված փոխառություն	-	40,542	-	4,142	20%
«ՓՄՉ Ներդրումներ» վարկային կազմակերպությունից ստացված վարկ	-	6,000	-	-	11%
Ընդամենը երկարաժամկետ վարկեր ու փոխառություններ		135,034		576,112	
<u>Կարճաժամկետ</u>	ԱՄՆ դոլար	Հազ. դրամ	ԱՄՆ դոլար	Հազ. դրամ	Տարեկան դրույքը
ՌԴ «Բանկ ՖԻՆԱՄ» ՍՊԸ-ից ստացված վարկ	1,400,000	565,012	1,100,000	424,347	10.5%
«Մեզա Պանտերա» ՍՊԸ-ից ստացված փոխառություն	-	48,604	-	-	24%
«ՓՄՉ Ներդրումներ» վարկային կազմակերպությունից ստացված վարկ	-	14,500	-	-	11%
Հաշվեգրված տոկոսներ	-	15,223	-	-	
Ընդամենը կարճաժամկետ վարկեր ու փոխառություններ		643,339		424,347	

31.12.2012 թ-ի դրությամբ Դուստրի վերցված երկարաժամկետ վարկերի և փոխառությունների մնացորդը կազմել է 118,000 հազ. դրամ, իսկ կարճաժամկետ վարկերի և փոխառությունների մնացորդը՝ 19,540 հազ. դրամ, այդ թվում՝ 5,040 հազ. դրամ հաշվեգրված տոկոսներ:

15. Կրեդիտորական պարտքեր և ստացված կանխավճարներ

ՀՀ հազ. դրամներով	<u>2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</u>	<u>2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</u>
Գնումների գծով	23,051	181,033
Վճարահաշվարկային գործառնությունների գծով	808,976	277,513
Կրեդիտորական պարտքեր բյուջեին	94,179	630
Կրեդիտորական պարտքեր սոցապ հատկացումների գծով	4,520	1,658
Այլ կրեդիտորական պարտքեր	3,712	3,715
Ընդամենը կրեդիտորական պարտքեր	934,438	464,549
Ստացված կանխավճարներ	85,013	16,266

31.12.2012 թ-ի դրությամբ Գուստրի կրեդիտորական պարտքերի մնացորդը կազմել է 1,131 հազ. դրամ, իսկ ստացված կանխավճարների մնացորդը՝ 50,604 հազ. դրամ:

16. Պահուստներ

Խմբի պահուստներն իրենցից ներկայացնում են Մայր կազմակերպության «Աշխատակիցների չօգտագործված արձակուրդային վճարների» և «Վճարահաշվարկային գործունեության փոխանցումների հետվերադարձման» պահուստները, որոնց հանրագումարը 31.12.2012 թ-ի դրությամբ կազմում է 30,854 հազ. դրամ, 31.12.2011 թ-ի դրությամբ 13,092 հազ. դրամ:

17. Հասույթ և մատուցված ծառայությունների ինքնարժեք

Մայր Կազմակերպությունը զբաղվում է ՀՀ տարածքում վճարահաշվարկային և դրամական փոխանցումների իրականացման ծառայությունների մատուցմամբ: Խմբի ստացված հասույթը 2012 թ-ին կազմել է 1,248,985 հազ. դրամ, որից 104,676 հազ. դրամը Գուստր ընկերության իրացման հասույթն է: Մայր Կազմակերպության հասույթը 2011 թ-ին եղել է 337,206 հազ. դրամ:

2012 թ-ին Խմբի մատուցած ծառայությունների ինքնարժեքը կազմել է 503,504 հազ. դրամ, որից Գուստր ընկերության մատուցած ծառայությունների ինքնարժեքը կազմել է 69,312 հազ. դրամ: Մայր Կազմակերպության 2011 թ-ի այդ ցուցանիշը եղել է 196,858 հազ. դրամ:

18. Այլ եկամուտներ

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	<u>2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի</u>	<u>2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի</u>
Ասոցիացված կազմակերպության բաժնեմասի վաճառք	38,025	-
Հիմնական միջոցների վաճառքից եկամուտներ	18,109	-
Կրեդիտորական պարտքերի դուրսգրում	139	5,616
Արտարժույթով արտահայտված ակտիվների ու պարտավորությունների վերագնահատումից եկամուտ	104,804	28,873
Եկամուտներ միջնորդային ծառայություններից	30	208
Այլ եկամուտներ	88	182
Ընդամենը	161,195	34,879

2012 թ-ին Դուստրի այլ եկամուտները կազմել են 21,152 հազ. դրամ:

19. Իրացման ծախսեր

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	<u>2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի</u>	<u>2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի</u>
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածք	23	427
Մարկետինգի և գովազդի ծախսեր	2,864	1,286
Այլ ծախսեր	1,708	1,473
Ընդամենը	4,595	3,186

2012 թ-ին Դուստրի իրացման ծախսերը կազմել են 1,917 հազ. դրամ:

20. Վարչական ծախսեր

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	<u>2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի</u>	<u>2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի</u>
Հատուցումներ աշխատակիցներին	3,906	863
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածք	17,193	7,752
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	5,714	1,101
Փոստի ու հեռահաղորդակցման ծախսեր	16,752	9,382
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	35,299	16,696
Առդիտ և խորհրդատվություն	2,280	520
Բանկային ծախսեր	5,997	1,025
Չփոխհատուցվող հարկեր	9,430	665
Այլ ծախսեր	4,150	9,303
Ընդամենը	100,721	47,307

2012 թ-ին Գուտորի վարչական ծախսերը կազմել են 13,047 հազ. դրամ:

21. Այլ ծախսեր

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	<u>2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի</u>	<u>2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի</u>
Կրեդիտորական պարտքի վերականգնում	2,347	-
Հիմնական միջոցների սպասարկում և վերանորոգում	9,717	-
Վարձավճար	3,444	-
Կրեդիտորական պարտքերի ուշացման դիմաց հաշվարկված տույժեր	3,438	-
Հարկային տույժ-տուգանքներ	-	179
Տրանսպորտային ծախսեր	2,323	-
Արտարժույթով արտահայտված ակտիվների ու պարտավորությունների վերագնահատումից ծախս	91,495	7,286
Հիմնական միջոցների վաճառքի ինքնարժեք	9,636	-
Ասոցիացված կազմակերպության բաժնեմասի վաճառք	38,025	-
Հատկացումներ չօգտագործված արձակուրդային պահուստին	12,913	10,475
Հատկացումներ «Վճարահաշվարկային գործունեության փոխանցումների հետվերադարձման» պահուստին	14,458	-
Այլ ծախսեր	3,416	6,401
Ընդամենը	191,212	24,341

2012 թ-ին Գուտորի այլ ծախսերը կազմել են 27,824 հազ. դրամ:

22. Ֆինանսական ծախսեր

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	<u>2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի</u>	<u>2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի</u>
Վճարված տոկոսներ	93,353	2,341
Հաշվեգրված տոկոսներ	15,223	-
Ընդամենը	108,576	2,341

2012 թ-ին Դուստրի ֆինանսական ծախսերը կազմել են 8,195 հազ. դրամ:

23. Հատկացումներ սոցիալական ապահովության հիմնադրամին

Խումբը, համաձայն «Պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» ՀՀ օրենքի, կատարում է հատկացումներ պետական կենսաթոշակային հիմնադրամին: 2012 թվականին իրականացրել է 20,046 հազ. դրամի հատկացումներ՝ հաշվարկված աշխատավարձերի դիմաց: Աշխատողների աշխատավարձից պահած և վճարված սոցիալական ապահովագրության հատկացումները կազմել են 3,674 հազ. դրամ:

24. Հարկեր և այլ պարտադիր վճարներ

2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի, հազար դրամ

	Տարվա սկզբին		Շրջանառություն		Տարվա վերջին	
	Գերավճար	Ապառք	Վճարված	Հաշվարկված	Գերավճար	Ապառք
Շահութահարկ	98	-	23,017	116,741	-	93,626
Եկամտահարկ	-	630	19,323	19,246	-	553
ԱԱՀ	118	-	27,376 ¹	21,488	6,006	-
Գույքահարկ	-	-	40	38	2	-
Սոցապ վճար	-	1,658	20,046	22,908	-	4,520
Այլ պարտադիր վճարներ	-	-	568	568	-	-
Ընդամենը	216	2,288	90,370	180,989	6,008	98,699

¹ Այս ցուցանիշը ներառում է մատակարարներին և մաքսատանը վճարված ԱԱՀ-ն:

31.12.2012 թ-ի դրությամբ Դուստրի բյուջեի գծով դեբիտորական պարտքը կազմել է 5,610 հազ. դրամ, իսկ կրեդիտորական պարտքը՝ 509 հազ. դրամ:

25. Կապակցված կողմերի բացահայտում

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ե. Տրեյստերից ¹	
Ստացված փոխառություն	45,885
Ա. Սարգսյանից ²	
Ստացված փոխառություն	42,607
Տ. Ավետիսյանից ³	
Ստացված փոխառություն	40,542
«Մեգա Պանտերա» ՍՊԸ-ից ⁴	
Ստացված փոխառություն	48,604
Մ. Հարությունյանից ⁵	
Տրված փոխառություն	1,500

¹ Ե. Տրեյստերը Մայր կազմակերպության բաժնետերն է:

² Ա. Սարգսյանը Մայր կազմակերպության բաժնետերն է:

³ Տ. Ավետիսյանը Մայր կազմակերպության բաժնետերն է:

⁴ «Մեգա Պանտերա» ՍՊԸ-ն Խմբի համար ասոցիացված կազմակերպություն է:

⁵ Մ. Հարությունյանը Գուտտր ընկերության տնօրենն է:

26. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

26.1 Արժուքային ռիսկ

2012 Ֆինանսական տարվա ընթացքում Խմբի գործառնական արժույթը եղել է ՀՀ դրամը: 31.12.2012 թ-ի դրությամբ արտարժուքային դրամական միջոցները չնչին են: 31.12.2012 թ-ի դրությամբ ունի վերցված վարկային միջոցներ 1,400,000 ԱՄՆ դոլարի, որոնք համարժեք են 565,012 հազ. դրամի: Խումբը ենթարկվում է ՀՀ դրամի արժեզրկման ռիսկի ազդեցությանը:

26.2 Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Խումբը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Ծառայությունների մատուցման փուլում Խումբը կրում է այս ռիսկի ազդեցությունը:

26.3 Կապիտալի ռիսկի կառավարում

Մայր Կազմակերպությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որ ապահովի իր գործունեության անընդհատությունը՝ փոխառու և կապիտալ միջոցների օպտիմալ համապատասխանությունն ապահովելու միջոցով:

Կապիտալը կազմված է կանոնադրական կապիտալից, պահուստային հիմնադրամներից և չբաշխված շահույթից: Խմբի համախմբված գուտ ակտիվները 31.12.2012 թ-ին կազմել են 438,631 հազ. դրամ, իսկ 31.12.2011 թ-ին Մայր Կազմակերպության գուտ ակտիվները եղել են 37,402 հազ. դրամ:

26.4 Իրական արժեք

Ղեկավարության համոզմամբ՝ ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց իրական արժեքին:

Ելնելով Հայաստանի շուկայում իրացվելիության և հրապարակված «տոկոսադրույքի հայտանիշների» բացակայությունից, ինչպես նաև այն փաստից, որ Խմբի գործարքների մի մասն իրականացվել է կապակցված կողմերի հետ և առանձնահատուկ բնույթի է՝ իրատեսական չէ որոշել կապակցված կողմերից ստացված և նրանց տրամադրված փոխառությունների իրական արժեքները:

Այլ դեպքերում իրական արժեքը որոշվում է՝ վկայակոչելով շուկայական արժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ կամ զեղչելով համապատասխան դրամական միջոցների հոսքերը՝ օգտագործելով նմանատիպ գործարքների գծով շուկայական տոկոսադրույք: Արդյունքում, ղեկավարության համոզմամբ, ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը համապատասխանում է դրանց հաշվեկշռային արժեքին:

27. Պայմանական պարտավորություններ

27.1. Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայրը և համապատասխան ենթակառուցվածքները, որոնք գործում են ազատ շուկայական տնտեսությամբ երկրներում:

Հայաստանի տնտեսության առանձնահատկություններից են՝ բիզնեսի ոլորտում ու տնտեսության մեջ օտարերկրյա կապիտալի համեմատաբար փոքրածավալ ներգրավվածությունը, ինչպես նաև Հայաստանի տնտեսության մեկուսացված լինելը համաշխարհային տնտեսության համապատասխան սեկտորներից:

Երկրի տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և դրա հետևանքով ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին:

2012 թ-ին ֆինանսական ճգնաժամի բացասական ազդեցությունը Հայաստանում էլ ավելի է աճել: Դրա արտահայտման ձևերից են՝ նվազ եկամուտը, արտաքին ֆինանսական կաույցների միջոցների կտրուկ նվազումը և Սփյուռքից դրամական միջոցների ներհոսքի կտրուկ կրճատումը:

27.2. Ապահովագրություն

ՀՀ-ի տնտեսության զարգացման ներկա փուլում ապահովագրության շատ տեսակներ զարգացման սկզբնական փուլում են և լայնորեն չեն կիստվում: Սա է պատճառը, որ Խումբը ապահովագրված չէ գործունեության ընդհատման, զույթի կորստի կամ այլ անձանց կողմից պարտավորությունների չկատարման հետևանքով վնասներ կրելու իրադարձություններից: Քանի դեռ Խումբը ապահովագրված չէ համապատասխան ռիսկերից, առկա է ակտիվների կորստի կամ ոչնչացման վտանգ, որը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ նրա գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

27.3. Անորոշություններ

Քանի դեռ սույն ֆինանսական հաշվետվության՝ վերը նշված անորոշություններում առկա են տարակուսանքներն ու ենթադրությունները, Մայր Կազմակերպության ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե դրանք ինչ չափով կարող են ազդեցություն ունենալ Խմբի ակտիվների ու պարտավորությունների մնացորդային արժեքների վրա:

Խմբի 2012 թ-ի ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում ֆինանսական ճշգրտումի ազդեցությունը, եթե կան այդպիսիք, որոնք կարող էին անհրաժեշտ համարվել, եթե ներկա ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը նկատելի և արժանահավատորեն գնահատելի լիներ: